ԳԱԻԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Շամախի, 17 փետրվարի

Ամսիս 16-ին ս. Սահակի տօնի օրը տեղիս հայոց ծխական դպրոցի մանկավարժական կազմը տօնեց հայոց տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօբելեանները մի շքեղ երեկոյթով։ Դպրոցի թատերասրահը լիքն էր հանդիսականներով։ Հանդէսը բացվեց «Ով Հայոց Աստուած» օրհներգով, որ երգեց քառաձայն խումբը ղեկավարութեամբ աւագուսուցիչ Գ. Մելիքեանի։ Ապա աւ.-ուսուցիչը խօսեց հայ ազգի անցեալ և արդի վիճակի մասին, երկար կանգ առնելով ազգ և ազգայնութիւն հասկացողութիւնների բացատրութեան վրա և շեշտելով նրանց կարևորութիւնը հանուր քաղաքակրթութեան տեսակէտից։ Ուսուցիչներ՝ Մ. Խաչատրեան և Ց. Բարղամեան կարդացին հակիրճ ըէֆէրատներ, առաջինը գրերի գիւտի և տպագրութեան, երկրորդը հայ գրականութեան մասին։ Ուսուցչուհիներ տ. տ. Վ. Աթանասեան և Շ. Մելիքեան արտասանեցին երկու կտոր Ա. Ծատուրեանի բանաստեղծութիւններից։ Քառաձայն խումբը մէջ ընդ մէջ երգեց «Բամբ, որոտան», «Ով դու բարեկամ», «Հապա քաջաղունք» և ուրիշ ժողովրդական երգեր։ Համերգից յետոյ մանկ. կազմի անդամները խաղացին «Ընդունելութեան օրը» վոդեվ. 1 գործ.։ Վերջը դրեցին կենդանի պատկերներ։ Զուտ արդիւնքը յատկացված է յօգուտ դպրոցի։

Գաղաւոն